

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

1. Բարայան, Խոյի շրջան, գյուղ Սնյավար. Հայերենի բարրառագիտական աս-
լասի անտիպ նյութեր (Հայաստանի ՀԲԱ-ի անտ. նյութ.), տետր № 178 (գտնվում են լեզվի,
ինստիտուտի բարրառագիտության բաժնում):

Դարադադ. Քնվականի շրջան

Հաղորդի շրջան. Գ. Հին Թաղար

ուղիս ըմ	ըմ ուղիս	սիրիս ըմ	ըմ սիրիս
ուղիս ըս	ըս ուղիս	սիրիս ըս	ըս սիրիս
ուղիս ա	ա ուղիս	սիրիս ա	ա սիրիս
ուղիս ըք	ըք ուղիս	սիրիս ը(ն)ք	ը(ն)ք սիրիս
ուղիս էք՝	էք՝ ուղիս	սիրիս ըք	ըք սիրիս
ուղիս ըն	ըն ուղիս ³	սիրիս ըն	ըն սիրիս ⁴

(Հյուսիսի բարբառների մի մասում ներկայի կազմության ժամանակ կիրառվում է դերբայի երկու տարբերակ՝ -լ և -լի կամ -լը/ մասնիկներով վերջավորվող, Այստեղ ևս առաջին ձևը հանդես է գալիս օժանդակ բայի ետադաս, իսկ երկրորդը՝ նախադաս գործածության դեպքում, ինչպես՝

Նախիջևան, գյուղ Նորս

Մարաղա

սիրել էմ	էմ սիրելի	սիրալ ըմ	ըմ սիրալ
սիրել էս	էս սիրելի	սիրալ ըս	ըս սիրալ
սիրել ի	ի սիրելի	սիրալ ը	ը սիրալ
սիրել էնք՝	էնք՝ սիրելի	սիրալ ընք	ընք սիրալ
սիրել էք՝	էք՝ սիրելի	սիրալ ըք	ըք սիրալ
սիրել էն	էն սիրելի ⁵	սիրալ ըն	ըն սիրալ ⁶

Եղեգնաձորի շրջանի Եղեգիս և Քարազուխ գյուղերում, ներկա ժամանակի կազմությանը մասնակցում է միայն -լ վերջնական շրջանով դերբայը, օրինակ՝

Եղեգնաձորի շրջան, գյուղ Քարազուխ

սիրել էմ	էմ սիրել	սիրել է՛՝	է՛՛ սիրել
սիրել էս	էս սիրել	սիրել էք	էք սիրել
սիրել ի	ի սիրել	սիրել էն	էն սիրել ⁷

-լ վերջավորությամբ դերբայը, որպես ներկա ժամանակ կազմող բայաձև, տարածված է Մարաղայում, Ազոտիսի մի շարք բնակավայրերում, հոյ, Սալմաստ, Ուրմիա գավառների մի քանի գյուղերում:

Նշված կազմություններում կարելի է նկատել մի որոշակի օրինաչափություն: Մի շարք բարբառներում ներկայի կազմության մեջ -ա և -լ վերջավորությամբ դերբայները մնում են անփոփոխ օժանդակ բայի թե՛ ետադաս և թե՛ նախադաս կիրառություններում (ուղիս ըմ, լէս ըմ ուղիս, սիրել էմ, լէս էմ սիրել), այն դեպքում, երբ բարբառների մի այլ խմբում, եթե դերբայները դեռևս անփոփոխ են օժանդակ բայի էտադաս դիրքում (ապրէս ըմ, սիրաս էմ), ապա օժանդակ բայի նախադաս կիրառություններում դերբայի վերջավորության մեջ նկատելի է փոփոխություն (լէս ըմ ապրելիս, լէս էմ սիրալի): Ընդ որում եթե այս -ելի վերջավորությունը ինչ-որ շահով դեռևս կարող է առնչվել անորոշ դերբայի -ել վերջավորության հետ, ապա ներկայի կազմության մյուս ձևում՝ ապրէս ըմ, այդ կապը անհասկանալի է:

³ Ա. Մ կ ր տ ու մ յ ա ն. Ղարադադ, Քնվականի շրջան, գյուղ Ղասմաշեն. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 181:

⁴ Գ. Ա մ ի ր յ ա ն. Հաղորդ, գյուղ Հին Թաղար. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 127:

⁵ Լ. Բ ա բ յ ա ն. Նախիջևան, Նորս. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 144:

⁶ Ա. Վ ա ն յ ա ն. Մարաղա. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 217:

⁷ Գ. Հ ո վ չ ա ն ի ս յ ա ն. Եղեգնաձորի շրջան, գյուղ Քարազուխ. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 234:

Առհասարակ — և —ս վերջավորությամբ դերբայների ծագումնաբանական հարցերը հայ լեզվաբանական գրականության մեջ առ այսօր էլ մնում են վիճելի (լեզվաբանների մի խումբ (Ս. Գրիգորյան, Մ. Ասատրյան, Ռ. Բաղդամյան, Ա. Պողոսյան և ուրիշներ) նշված դերբայա-
ձևերը նույնացնում են՝ առաջացած համարելով միևնույն — իս նախաձևից։ Այսպես օրինակ՝ «Հալ բարբառագիտության դասընթաց» աշխատության մեջ Ա. Գրիգորյանը հանդում է այն եզ-
րակացության, որ վերջ հիշված բոլոր բարբառներում ներկա ժամանակի հարացույցում գոր-
ծածվում է — իս վերջավորությամբ անկատար դերբայը, որը ենթարկվում է զանազան փոփո-
խությունների, հանդես գալով մի քանի տարբերակներով։ Մարաղայում և Ուրմիայում, որտեղ
անկատարն ունի — մասնիկով ձև (միայն օժանդակ բայի ետադաս դիրքում), մաշվել և դուրս
է ընկել — իս վերջավորությունը, որը վերականգնվում է ժխտական խոնարհման և շրջուն շա-
րադասության դեպքում։ «Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլոր այս բարբառներում մենք
ունենք իս ամբողջական վերջավորություն և նրա հնչյունափոխված կամ մաշված յիս, յ, ա, լ
ձևերը...։ Ուրեմն Արզլիների, Շամախու, Կարճևանի, Մեղբու, Հաղբուփի, Ուրմիայի, Խոյի և Մա-
րաղայի բարբառները պատկանում են միայն մի ճյուղի, այն է՝ իս. և գիտական որևէ հիմք
չկա այդ մաշված ձևերից մի քանիսը մեխանիկորեն առանձնացնելու և առանձին ճյուղեր հա-
մարելուն»⁸։

Մ. Ասատրյանն էլ խոսելով Խոյի և Ուրմիայի տարածքում ներկան կազմող դերբայի մա-
սին՝ գրում է. «Այս բոլորը գալիս են ասելու, որ այսպես կոչված Խոյի բարբառը իր ներկան
կազմում է ոչ թե անորոշ դերբայով, այլ իս-ով վերջացող անկատար դերբայի իս ձևի սոմամբ,
որով և նույնացել է անորոշին։ Եթե ընդունենք, որ ներկան կազմվում է անորոշ դերբայով,
անբացատրելի կմնա շրջված ձևերում հանդես եկած ի-նք»⁹։

Մյուս խմբի լեզվաբանները — և —ս վերջավորությամբ դերբայները տարբերակում են որ-
պես ծագումնաբանորեն տարբեր միավորներ։

Ա. Ղարիբյանն, օրինակ, գտնում է, որ — մասնիկով ձևը հայերենի անորոշ դերբայն է,
այսինքն՝ գրելով հետևյալը՝ «...վերջավորությունները և ներկան կազմում են անորոշ դերբայի ծագումնաբանական հարցերը»¹⁰։
որը գրաբարում ունեն ներգոյականի նշանակություն։ Իր տեսակետը նա փաստարկում է հե-
տևյալ կերպով։ Միջին հայերենում հանդիպում են ես եմ ի կարգի, ես եմ ի գրել ձևերը, որոնց
անմիջական զարգացումն է ներկան կազմող անորոշ դերբայը, և որ գրաբարում ևս անորոշ
դերբայի հայցական հոլովը ներգոյականի իմաստով է գործածվում, այսպես՝ «Բաղումք ի ձեռք
ի խորակէ յերթալն սատակիցին (Եղիշե)»¹¹։

Ս. Մուրադյանի կարծիքով էլ հարկ է լ ճյուղը առանձնացնել կիս-ից, քանի որ. «...վեր-
ջիններս ծագում են ոչ թե ուղղակիորեն անորոշ դերբայի ածանցյալ ի՞նչ մասնիկով բայանուն-
ների ներգոյական հոլովից (ասելիք-յասելիս, գրելիք-ի գրելիս, լինելիք-ի լինելիս)»¹²։

Մենք համամիտ ենք վերջին տեսակետին հետևյալ պատճառներով։

Հայտնի է, որ գրաբարում անորոշ դերբայը պատկանում էր արտաքին և հոլովման, և որ-
պես այդ հոլովման բառ, ներգոյականի իմաստը կազմում էր հայցականի վրա ի նախդիր ալե-
լացնելով։ Հայտնի է նաև, որ սահմանական ներկան գործողության մեջ լինելու գաղափար է
արտահայտում, և որ այդպիսի հատկությամբ օժտված է ներգոյական հոլովը։ Հետևաբար անո-
րոշի նախդրիվ հայցականը ներգոյականի իմաստ ունենալով՝ ընդունակ էր դառնալու ներկայի
արտահայտիչ։

Այս փաստը նշում է Ա. Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ
արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ։ Այստեղ նա, խոսելով միջին հայերենում ժխտականի
կազմության մասին, գրում է, որ այն երևան է գալիս հետևյալ կաղապարով՝ օժանդակ բայի
ժխտական ձև, նախդիր և անորոշ դերբայ, ու շարունակում է. «նույն ձևով և նույն նախդրով
կձևանար երբեմն նաև հաստատական խոսքը»¹³։

⁸ Ա. Գրիգորյան. Հայ բարբառագիտության դասընթաց. Երևան, 1957, էջ 71։

⁹ Մ. Ասատրյան. Ուրմիայի բարբառը. Երևան, 1962, էջ 74։

¹⁰ Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն. Երևան, 1953, էջ 166։

¹¹ Մ. Մուրադյան. Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի
շուրջը (XII—XIV դդ.) — Լեզվի և ոճի հարցեր. հ. 3, Երևան, 1973, էջ 218։

¹² Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն
լեզվի. Վիեննա, 1866, էջ 37։

Ստ. Պալասանյանն էլ, քննելով արեւելահայ լեզվում ներկայի կազմությունը, գրում է. «Խշտ այս մտքով վարում էին հները (է, ԺԱ, ԺԲ դդ.) անորոշ դերբայի ներգոյականը եմ ժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ժամանակներովը. ի խօսել եմ, ի ծաղկել էր»¹³:

Սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի արտահայտության այս ձևը գործածական է եղել դեռևս գրաբարում, այսպես՝ «Յոյնք են ի գալս, «Դուք ինձ վնաս էք ի տալ», «Քոսաճարս այրել էք ի տալ» (Յով.: Մամ., Պատմ. Տար., 194), «Ի համառօտն եմ ի փութալ» (Գր. Նար., 396, 404), «Դիտես եթէ զհամառօտն եմ յախործել» (Ն. տ., 406), «Չէնք աղէկ ի տեսանել» (Շ. Բագր., Պատմ., 70)¹⁴:

Նախորդիվ անորոշի և օժանդակ բայի բաղադրությամբ կազմված ներկայի և անցյալ անկատարի ձևերը հետագա դարերում բավական լայն կիրառություն են ստացել հայոց լեզվում:

Ղ. Հովնանյանը «Հետազոտությունք նախնայաց ռամկորենի վրա» աշխատության մեջ ուսումնասիրելով միջին հայերենյան գրավոր նյութերը՝ անորոշով ներկայի բազմաթիվ օրինակներ է նշում՝ վարդան Արեւելցու «Պատմութիւն տիեզերական» և Մաղաքիա Արեւլայի «Պատմութիւն Բաղարաց» աշխատանքներում: Նա Արեւելցու մոտ «նամ վերջավորութիւններ անկատար դերբայով ներկայի մեկ օրինակ է վկայում, նշելով, որ նրա լեզվում անորոշ դերբայի ի նախորդիվ հայցականի և օժանդակ բայի համադրությամբ կազմված միավորները հաստատական ներկայի հիմնական ձևերն են. «Բերենք բանի մը օրինակ: Հայտնի է որ Կիլիկիո բարբառուն մեջ շատ ցանցառ կհանդիպի նամ վերջավորութիւնն թե ի գոյականս և թե ի դերբայս: Արդ նույն ձևն սակավ տողերու մեջ երկու անգամ եզործածէ Վարդան. «Եւ սրտումս դրի զքո խօսքդս: Ավելի նշանական է մուսն. «Բեզ աղօթք էն առնում». որու հետ կապւալ են նաև հետևյալքն: Յուր գրութիւններն ընթացք մեջ օրինակաց մեջ դեպքանք. «Զորք էն յասել: Թէ շատ էք ի արցանէլ, խօսք մի էմ յասել: (Ի) հաւատալ էմ, Հետ մեզ վասն այն էն ի կոուիլս: Յուր պատմութիւնս ալ սակավատուղ ռամկորենին մեջ կգտնենք. «Հայոց կանթնին էր վառիւ: Արդ՝ Աղօթք էն առնում գրված է փխկ. Կիլիկիանին՝ Աղօթք կու առնեն, Զորք էն յասել՝ ...փի: Զորք կու առնեն ...բացատրության՝ որ այնչափ սովորական է առ Եւս Կիլիկիցիս՝ Կայ ու... կէնայ ու... կու ձևերով, ու երբեք կհանդիպի Վարդանա մեզի ծանոթ ռամկորեն գրվածոց մեջ: Ընդ հակառակն յուր ի կիր արկած, էմ ի... էլ, որ ի մատենագիրս հայոց մեծաց շատ հին ժամանակներու սկսյալ կգտնվի. «Յոյնք էն ի գալ (Յ. Մամիկ.), Այժմու մարդիկ խոցած էն յասել (Վանակ. Վ.) այսպես ի հաստատականն սովորական չէ առ Կիլիկիցիս: Բաց ի շատ սակավ օրինակաց որ հաղիվ երբեմն կհանդիպին այլ գիրս, երկու օրինակ կգտնենք առ Մխիթարա բժշկապետի. «Խասիաթ՝ զիրական եւ զառանձին գործն է ի ասել: Մաղձն է յայրէլ լինիս»:

Այսպիսով, նախորդիվ անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ կազմված բայաձևերը միջին հայերենի ձևավորման շրջանում որոշ վայրերում եղել են հաստատական ներկայի արտահայտման հիմնական ձևեր:

Հայտնի է նաև, որ միջին հայերենյան շրջանում թե՛ և թե՛ Կը ճյուղի բարբառներում ներկայի ժխտական հարադրույցը կազմվել է անորոշ դերբայի միջոցով. այսինքն՝ այդ շրջանում ժխտական խոնարհումը կազմելու եղանակներից մեկը անորոշ դերբայի ներգոյական հոլովով: օժանդակ բայի ժխտական ձևերի հետ գործածելն է. «Սահմանականի բացասականի այս ձևը ուրիշ բան չէ, եթե ոչ մի տեսակ ներգոյական. չեմ ի լուսել, չես ի տալ նշանակում են լուսելու գործողության մեջ չեմ, տալու գործողության մեջ չես և այլն: Այսպես ըմբռնելուց հետո՝ պետք էր սպասել, որ հաստատականի մեջ էլ սահմանականը այսպիսի ձև ստանար, և իրոք, Վարդանի և այլ գրողների հայերենում գտնում ենք՝ են ի կուիլ զկովում են», եմ յանձնել, է ի վառիլ, հաւատալ եմ, է ի գալ, ոնց ելնեմ ի դուրս, երբ երկինքն ի շուրջ է ի գալ եւ զիօ ի ներք է ի յուսել. ինչ ցեղ ելնեմ, երբ երկինքն ի վրայս է ի փլշել եւ զիս ի ներքն է յարգելիլ: Այս ձև սահմանականը նախարան է արեւելյան հայերենի ում ձևով ներկայի, որ նույնպես ուրիշ բան չէ, եթե ոչ ներգոյական հոլովով»¹⁵:

¹³ Ստ. Պալասանյան. Ընդհանուր տեսություն արեւելյան նոր գրավոր լեզվի հայոց. Թիֆլիս, 1870, էջ 69:

¹⁴ Տե՛ս Ալ. Մարգարյան. Անորոշ դերբայի պատմական նշանակության և նրանից ունեցած անկատարի առաջացման մասին. — Հայերենի հարադիր բայերը. Երևան, 1966, էջ 478:

¹⁵ Ղ. Հովնանյան. Հետազոտությունք նախնայաց ռամկորենի վրա. Վիեննա, 1897, էջ 254—255:

¹⁶ Հ. Ահառյան. Հայոց լեզվի պատմություն. հ. 2, Երևան, 1951, էջ 251:

Սրանից հետևում է, որ սահմանական եղանակի միջին հայերենում գործածված բոլոր տիպի ներկաներին ժամանակագրական առումով նախորդել է անորոշ դերբայով ներկան:

Այս բոլորից հետո կասկած չի կարող լինել, որ այսօրվա բարբառներում հանդիպող ներկաի տիպի եմ, ապրել եմ և նման ձևերը մատենագրությունից ավանդված անորոշ դերբայով կազմված ներկայի ձևերի արտահայտություններն են, որոնց մեջ ընկել է ի նախդիրը:

Ինչպես արդեն ասվել է, Եղեգնաձորի շրջանի Եղեգիս և Փարազուխ գյուղերում, որոնց բնակչությունը գաղթել է Խոյից, ներկան օժանդակ բայի նախադաս և ետադաս դիրքում կազմվում է անորոշ դերբայով: Այդ վայրերում անորոշ դերբայը սովորական ձևով է գործածվում, և որևէ հիմք չկա մտածելու, թե դա — վերջավորությամբ դերբայի ձևափոխված տարբերակն է, բանի որ դերբայական — վերջավորությունից հետո ոչ մի ձայնավոր հանդես չի գալիս:

Հետաքրքիր է նշել նաև, որ ներկան անորոշ դերբայով է կազմվում Սասունի Հոսներ, Արփի գյուղերում, որտեղ այդ քերականական իմաստի արտահայտման համար օգտագնաբար կիրառվում են նաև կռու-ով ձևեր, այսպես՝

սիրիլ ըմ	սիրիլ իթ	գըսիրըմ	գըսիրիք
սիրիլ ըս	սիրիլ իք	գըսիրըս	գըսիրիք
սիրիլ ը	սիրիլ ին	գըսիրը	գըսիրին ¹⁷

Այստեղ սիրիլ ըմ և գըսիրըմ ձևերը համարժեք են, այսինքն՝ ունեն միևնույն լսարժեք՝ իմաստը:

Քանի որ Սասունի նշված վայրերը աշխարհագրորեն շատ հեռու են և ճյուղի այսօրվա զրաված տարածքից, որով և բացառվում է դրանց լեզվական ազդեցությունը, մնում է միայն կարծել, որ Սասունի հիշյալ վայրերի խոսվածքները իրենց մեջ վերապրուկային ձևով մինչև այսօր էլ պահպանել են անորոշ դերբայով ներկայի գործածություններ, որը միջին դարերում այս վայրերի համար եղել է ներկայի արտահայտության հիմնական (կամ միակ) միջոցը: Հետազոտում Կը ճյուղի բարբառների ազդեցությունը ներկայի համար սկսել են գործածվել նաև Բասնիկավոր ձևերը, իսկ անորոշ դերբայով միավորները, որպես ներկայի նախնական արտահայտություններ, շարունակել են պահպանվել հիշյալ ձևերը փոխառնելուց հետո էլ:

Անորոշ դերբայով կազմվող ներկայի ինքնուրույնության, անկախության մի կողմն իս կա: Ս ճյուղի բարբառների զրաված մի որոշակի տարածքում՝ Գողթան գավառի մի շարք խոսվածքներում, Մեղրիում, Կարճևանում, Արեշում, Կոզնում պայմանական եղանակի բայաձևերն իմաստն արտահայտվում է ոչ թե կը եղանակիչով, ինչպես ընդունված է մյուս բարբառներում, այլ՝ անորոշ դերբայի և օժանդակ բայի ղուղակցմամբ, օրինակ՝

Արեշ		Մեղրի	
ապրել ըմ	ապրել անք կապրեմ	սէրիլ իմ	սէրիլ իք ¹⁸
ապրել ըս	ապրել աք	սէրիլ իս	սէրիլ իք ¹⁹
ապրել ի	ապրել ան ¹³	սէրիլ ի	սէրիլ ին ¹⁹

Այստեղ մենք ունենք այն նույն երևույթը, ինչ արևմտյան տարածքի բարբառներում է, որտեղ կռու-ով ներկան միաժամանակ արտահայտում է պայմանական եղանակի ապառնի իմաստը: Արևմտյան բարբառներում ներկա բայաձևերի ձևաբանական տարբերակման համար (իհարկե, ոչ բոլոր վայրերում) ստեղծվել է շարունակական ներկայի քերականական կարգը. «Ամեն լեզվի մեջ էլ ներկան կարող է իբրև ապառնի գործածվել: Սակայն այն բոլոր լեզուներում, ուր ներկան նաև իբրև ապառնի է գործածվում, կա հատուկ և առանձին ապառնի, Գրարի ապառնի չնշվելուց հետո, միջին հայերենը առանձին ապառնիից զուրկ մնաց: Անպատկար-

¹⁷ Այս փաստը գրի է առել Ա. Խաչատրյանը Բալինի շրջանի ներքին Սասնաշեն գյուղում, Սասունի Հոսներ գյուղից գաղթած բնակիչներից: Տե՛ս ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 121:

¹⁸ Ա. Լուսինյ. Արեշի բարբառը. Երևան, 1982, էջ 104:

¹⁹ Է. Աղայան. Մեղրու բարբառը. Երևան, 1954, էջ 208:

Հոթուներ վերացնելու համար, անհրաժեշտ էր ուրեմն կամ առանձին ապառնի ստեղծել և կամ նոր ներկա հնարել²⁰:

Նման մի երևույթ է տեղի ունեցել նաև այն վայրերում, որտեղ լայնորեն կիրառվել է անորոշ դերբայ և օժանդակ բայ կապակցությունը. ցույց տալով ինչպես խոսելու պահին կատարվող, այնպես էլ կատարվելիք գործողություն: Այնուհետև լեզվի զարգացման որոշակի աստիճանում, ինչպես միշին գրական հայերենում, այնպես էլ բարբառներում, ներկա և ապառնի լայնաձևերը տարբերակելու պահանջ է առաջացել: Իբրև հետևանք, որպես ներկան կազմող ժամանակաձևեր, ստեղծվել են —սով ձևերը, իսկ անորոշ դերբայի և օժանդակ բայի համադրությամբ կազմված միավորները սկսել են կիրառվել միայն պայմանականի դեպքում:

Ճիշտ է, այս երևույթը չի ընդհանրացել, բայց սրան հակառակ սկսել է լայնորեն կիրառվել —ս մասնիկն ունեցող դերբայով ներկան, նեղացնելով անորոշով ներկայի գործածության շրջանակները: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ պայմանականի նման կազմությունը առկա է միայն —ս վերջավորությամբ անկատար դերբայն ունեցող բարբառներում, որով մի անգամ ես հաստատվում է այն թեզը, որ նշված դերբայով ներկա կազմող բարբառների ձևաբանական տիպը առաջացել և աստիճանաբար տարածվել է անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ կազմված կաղապարը միարժեք դառնալուն զուգընթաց. երբ այն սկսել է գործածվել միայն որպես պայմանական եղանակի բայաձև:

Բարբառային նյութերը հաստատում են հիշյալ փաստը: Իրոք, այն վայրերում, որտեղ պայմանական ապառնին կազմվում է անորոշ դերբայով, ներկայի համար կիրառվում են —ս մասնիկով ձևը կամ նրա փոփոխված տարբերակները. այսպես՝

Ազուլիս		Կարճևեռ	
Ներկա	Պայմ.	Ներկա	Պայմ.
մընալիս ըմ	մընալ ըմ	մընայ իմ	մընալ ըմ
մընալիս ըս	մընալ ըս	մընայ իս	մընալ ըս
մընալիս ա	մընալ ա	մընայս ա	մընալ ա
մընալիս ըք	մընալ ըք	մընայ իք՝	մընալ իք
մընալիս ըքք	մընալ ըքք	մընայ իք՝	մընալ ըքք
մընալիս ըն	մընալ ըն ²¹	մընայ ին	մընալ ըն ²²

Իսկ այն բարբառներում, որոնց ներկան անորոշ դերբայով է ձևավորվում, պայմանականի էղանակախիմաստը դրսևորվում է մասնիկավոր կազմությամբ. այսպես՝

Օրդուբադի շրջ., գ. Ազա		Նղեզնաձորի շրջ., գ. Նղեզիս	
Ներկա	Պայմ.	Ներկա	Պայմ.
սիրալ իմ	կըսիրիմ	սիրալ էմ	կըսիրէմ
սիրալ իս	կըսիրիս	սիրալ էս	կըսիրէս
սիրալ ը	կըսիրը	սիրալ ի	կըսիրի
սիրալ ինք	կըսիրինք	սիրալ է՛՛	կըսիրէ՛՛
սիրալ էք	կըսիրէք	սիրալ էք՝	կըսիրէք՝
սիրալ ին	կըսիրին ²³	սիրալ էն	կըսիրէն ²⁴

20 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 4, մաս Բ, Երևան, 1961, էջ 173:

21 Հ. Մ ու ռ ա դ յ ա ն. Ազուլիսի բարբառը. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 22:

22 Հ. Մ ու ռ ա դ յ ա ն. Կարճևանի բարբառը. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 21:

23 Ա. Խ ա շ ա տ ը յ ա ն. Օրդուբադի շրջան, գյուղ Աղա. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 14:

24 Գ. Հ ա կ ո բ յ ա ն. Նղեզնաձորի շրջան, գյուղ Նղեզիս. ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր № 154:

2. Անճառյանը — մասնիկով անկատար դերբայի առաջացումը մեկնաբանում է հետևյալ կերպ, ըստ նրա միջին հայերենում ներկայի համար օգտագործվել է անորոշ դերբայը, և հետագայում, երբ անցյալ դերբայի — ելով վերջավորությունը դարձել է —ել, շփոթություն է առաջացել ներկայի իմաստն արտահայտող ձևերի և անցյալ դերբայի նոր տարբերակի միջև։ Դրանից խուսափելու համար ստեղծվել է —լիս վերջավորությամբ դերբայական միավորը, որն Անճառյանի կարծիքով առաջացել է լալիք բառից, որն ունի եռըքս. Ելաց լինելու իմաստները Այսպիսով, «...ի լալիս եմ ներգոյականից առաջանում է լալիս եմ Ելաց եմ լինում» բայը։ Մինչև հայերենի շրջանում, բազմաթիվ հայերեն բառեր և հատկապես տեղանունները իրենց նախորդի հայցականը-ներգոյականը գաղտնի էին ուղղական (իս վերջավորությամբ)»²⁵ և շարունակում է. «Լիս ձևի այս բացատրությունը առաջին բառից մի քիչ ծանր է դառնում, բայց նախորդ երեք ձևերի բացատրությունները՝ սահմանական ներկան իբրև ներգոյական, ցույց է տալիս, որ այստեղ էլ մենք գործ ունենք ներգոյական ձևի հետ»²⁶:

Ստ. Պալասանյանի կարծիքով —ս մասնիկով դերբայը վերցված է Երևանի բարբառից, այն ունի ներգոյականի իմաստ և հեշտությամբ կարելի է որոշել նրա ծագումը. «Տեսանք, որ հին ոչ երկբարբառը, արմատական բառերի մեջ լինի թե հոլովական վերջավորությունները, ընդհանրապես ու է փոխվում, միայն Երևանում՝ բարբառի մեջ սովորաբար ի է փոխվում, եթե բառերի մեջն է. Այնպես որ գրոց (տեսանք) լոյս, լոյգ, լոյն անորոշ դերբայի հոլովական վերջավորությունը ստացական հոգեբով—որ ընդհանրապես լուս, լուգ, լուն է դառնում—, այստեղ լիս միակերպ ձևով է երևում, այսինքն թե հոգը դերբայից անբաժին եղած է և ամեն դեպքի տեղ վարվում է անփոփոխ, եզակի և հոգնակի...»²⁷:

Ա. Ղարիբյանն էլ գտնում է, որ. «... այդ դերբայը (—լիս մասնիկով անկատարը—Գ. Գ.) ծագել է գրաբարի հոգնակի հայցական հոլովի կազմության անալոգիայով, ըստ որում այդ հայցականը վերցված է եղել ներգոյական իմաստով, այսինքն՝ կազմվել են ի գրելիս, ի մնալիս, ի կուղիլիս ձևերը, Հետևաբար՝ ի մնալիս եմ>մնալիս եմ>մնալիս եմ նշանակում է «մնալու գործողությունների մեջ եմ», «մնացողների մեջ եմ», «մնալիքի մեջ եմ»։ Իր այս իմաստով «ս» ճյուղը համեմատաբար մոտ է «լ» ճյուղին՝ մի խոշոր տարբերությամբ, որ վերջինս օգտագործում է անորոշ դերբայի եզակի նախորդի հայցականը, իսկ «ս» ճյուղը նույն դերբայի հոգնակի նախորդի հայցականը»²⁸:

Հետագայում «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նա ճշտում է իր տեսակետը, գտնելով, որ դրանք առաջացել են —լիք վերջնամասնիկն ունեցող ձևից, որն իր բովանդակությամբ գրաբարում նշանակել է կատարող, անող և, հայցականում ունենալով —լիս վերջավորությամբ ձև, օժանդակ բայի հարադրությամբ արտահայտել է ներկայի իմաստ։

Գ. Զահուկյանը նշված դերբայի ծագումը բացատրում է հետևյալ կերպ. «Բարբառների քննության հատարվող քննությունը ցույց է տալիս, որ պատմական հիմունքով պետք է միացնել և է Ս ճյուղերը՝ մի կողմից՝ Ս ճյուղի բարբառների միջակա աստիճանները (լիս, լիս, լս, ս) ցույց են տալիս լիս սկզբնաձևի առկայությունը, մյուս կողմից և ճյուղի բարբառների լի-ով ձևերը ժխտականում և հաստատականում (կողք, Կյառգյառ, Ղալալա, Աշտարակ) ցույց է տալիս, որ լիս-ը գոնե մասամբ ծագել է լոյս ձևից (հմտ. Կողքում՝ երթալս-էթալու)»²⁹:

Նշված երևույթը (—լ վերջավորությամբ դերբայի ետադան գործածության դեպքում —լի հնչյունակապակցությամբ վերջավորվող ձևերի կիրառությունը) անբացատրելի ու տարօրինակ չի թվա, եթե այն համեմատենք լեզվական այլ իրողությունների հետ։

Նախ պետք է նշել ներկան —ս մասնիկն ունեցող դերբայով կազմող բարբառների ազդեցությունը, որի պատճառով —լի վերջավորությամբ ձևերը համաբանության օրենքով սկսել են կիրառվել և ճյուղի բարբառներում, քանի որ վերջիններս այսօր ավելի շատ են ու տարածված, իսկ անորոշ դերբայով միավորները, որպես ամենանախնական ձևեր, աստիճանաբար անհետանում են։

25 2. Անճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 4, մաս Բ, էջ 176:

26 Նույն տեղում:

27 Ստ. Պալասանյան. Նշվ. աշխ., էջ 107:

28 Ա. Ղարիբյան. Հայ բարբառների մի նոր ճյուղ. Երևան, 1939, էջ 29:

29 Գ. Զահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն. Երևան, 1972, էջ 106:

Բացի այդ, շատ անգամներով սերկա ժամանակի գաղափարն արտաբերելու համար տառերը լծորդութիւնների դեպքում ղործածվում են զերբայական տարրեր ձևեր, այսպէս՝ Մեղրու շուսի վարձար, Գուգմնիս, Կուրիս, Ագարազ գլուղերում ել, ալ լծորդութիւն բայերի ներկան արտաբերում է -ա. իսկ մնացած բայերինը՝ -ում մասնիկն ունեցող անկաւար զերբայներով։ Ընդ որում -ա վերջավորութիւնը միավորները նախնական են, իսկ ում-ովը՝ փոխառութիւն, այսինքն՝ սրանք ներկայի կազմութիւն համար կիրառում են զերբայական տարրեր ձևեր՝ -ա և -ում մասնիկներով վերացող, որոնք, սակայն, ծագումնաբանորեն չեն կապվում։ Դեռ ավելին, Արեւի բարբառում նոնարման միենուն հարացուցում, բայական միենուն միավորի դեպքում ղործածվում են անկաւար զերբայի -ըմ և -ա վերջավորութիւնները, օրինակ՝

ապրէլիս ըմ	ապրէում անք	խումէլիս ըմ	խումէլում անք
ապրէլիմ ըս	ապրէլում աք	խումէլիմ ըս	խումէլում աք
ապրէլում ի	ապրէլում ան	խումէլում ի	խումէլում ան30

Վերը շարադրված փաստերի առկայութիւնը, սակայն, հիմք չի տալիս ծագումնաբանական որևէ կապ տեսնել -ում և -ա մասնիկներով զերբայների միջև։

Հանրադրմարի բերելով ներկա հոգվածում առաջ քաշված հարցադրումները, կարծում ենք, որ պարզաբանել -ա վերջավորութիւնները ձևերի առկայութիւնը ներկան անորոշ զերբայով կազմող բարբառներում, հենվելով միայն արտաքին նմանութիւն մոտ, բավարար չէ։ Սրանք էլ վերևում քաշված փաստերի նման պիտի է փորձել բացատրել լեզվի հակասական էութեամբ։ Նախ նրան հատուկ, նրանում ղործող, մեղ համար հաճախ անբացատրելի օրենքներով։

Այսպիսով, բարբառների համեմատական ուսումնասիրութիւնների և մատենագրութիւն աշխատները մեղ հիմք են աւելի ասելու, որ -լ և -ա մասնիկներով վերջավորող զերբայները ծագումնաբանական և առնչական կապ չունեն։

О ПРОИСХОЖДЕНИИ ПРИЧАСТИИ С ОКОНЧАНИЯМИ «Լ» И «Ս»

Г. Г. ГЕВОРКЯН

Резюме

Происхождение причастий с окончаниями *լ* и *ս* в армянской лингвистической литературе до сих пор не является окончательно решенным. Часть лингвистов (А. Григорян, М. Асатрян, Р. Баграмян, А. Погосян и другие) отождествляют эти причастия, считая, что они образовались из единой протоформы *լիս*. Представители другой группы лингвистов (Г. Ачарян, А. Гарибян, М. Мурадян и другие) считают, что окончания *լ* и *ս* различны по своему происхождению. Мы разделяем точку зрения представителей второй группы и считаем, что встречающиеся в современных диалектах формы глаголов *ապրելիմ եմ*, *սիրելիմ եմ* и др. являются выражениями глагольных форм настоящего времени, образованных от неопределенной формы причастия, которые зафиксированы в письменных памятниках.